№ 91 ՇԱԲԱԹ, 1 ՄԱՅԻՍԻ 1910 ՇԱԲԱԹ, 1 ՄԱՅԻՍԻ № 91

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գլխում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կօպէկ.
Խմբագրատան տէլէֆօն № 253

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱԲԾԵՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

Ցայտարարութիւնների համար վճարում են. 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.: Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°“ ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Մարգարիտ և Յովհաննէս Ծատուրեանները ցաւօք սրտի յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին՝ առաջինն իր թանկագին ամուսնու, երկրորդն իր անմոռանալի հօր՝ Զաքարիայի 2-դ կարգի վաճառական

ՍՏԵՓԱՆ ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ ապրիլի 28-ի երեկոյեան: Մարմինը կը տարվի Խոջիվանքի եկեղեցին: Թաղումն այսօր, մայիսի 1-ին, Խոջիվանքի գերեզմանատանը:
483. 1—1

ՆԿԱՐՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ
Ն. Գ. Ի. ԳԱԲԱԵՎԻ
Բացված է առ. ժամը 10-ից մինչև ժ. 4-ը ցեր. իր արհեստանոցում—Սուդէբնայա փող. տ. Իզմիրովի, № 47, Զուբալովի անուան շուններների տան դիմաց:
Մուտքի վճարը՝ 40 կոպ., աշակերտներին՝ 20 կոպ.: 481.

Ազգօգուտ Առևտրական Բանկի Վարչութիւնը
պատիւ ունի յայտնելու հասարակութեան, որ, համաձայն ֆինանսների մինիստրի թոյլտուութեան,
ՄԱՅԻՍԻ 1-Ի Բացված է Բաժանմունք ՋՈՒՂԱՅՈՒՄ (Երևանեան նահ.),
որը կատարելու է կանոնադրութեամբ թոյլատրված ամեն տեսակ բանկային գործողութիւններ:
(շ. կ.) (առ.) 471. 2—1

Թիֆլիսի Ժողովարան
Այսօր, շաբաթ, մայիսի 1-ին տեղի կունենայ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ
Հիւրերը՝ անդամների յանձնարարութեամբ՝ վճարում են մուտքի համար 1 ռ.:
482. 1—1

Կիրակի, մայիսի 2-ին
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ
(ԲԻՐԺԱ)
կը կայանայ
ՀԱՄԵՐԳ-ՊԱՐԵՐԵԿՈՅԹ
Դերասաններ՝ Ալլահվերդեան և Թորոսեան, Մասնակցութեամբ դերասանուհի տ. ՅԱՍՄԻԿԻ
կը ներկայացնեն
I
ՄԱՐԻԷՏՏԱ.
Վոդ. 1 գործ., փոխ. 2ուրարի
II
ՀԱՄԵՐԳ
Բարեհաճ մասնակցութեամբ տ. տ. Ե. Վ. Շրէդէր-Իվանովայի, Պ. Ղարուբաբայեանի, օպերային դերասաններ՝ Զարէհ Տիրացեանի, Վարդանեանի և ուրիշ:
Փիրումեան կը նուագէ սօլօ՝ Ֆլէյտայի վրա:
III
ՄԱՆԴՕԼԻՆԻՍՏՆԵՐԻ ԽՈՒՄԲ
ղեկավարութեամբ պ. Երամեանի՝ կը նուագէ եւրոպ. ժող. մեղեդիներ:
IV
ՊԱՐԵՐ
ԵՒՐՈՊԱԿԱՆ և ԱՍԻԱԿԱՆ,
որը կը տևէ մինչև ժամը 4-ը: Կը նուագէ զինուորական երաժշտական խումբը:
Սկիզբն է ճիշդ ժամը 8½-ին երեկոյեան
Տեղերի գները 40 կ.-ից մինչև 2 ռ.:
Տոմսակները վաղօրօր կարելի է ստանալ «Փարոս» կեօսկում, Երևանեան հրապ.:
Մանրամասնութիւնները պրոգրամայում:
Կարգադրիչ՝ Ալլահվերդեան և Շահինեան
(շ. կ.) (առ.) 479. 2—1

ՊԱՍՏԱՌՆԵՐ
(ՕԲՕԻ)
ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ
8 կ. սկսած մինչև 6 ռ. իւրաքանչիւր փութը (ռուլօ):
Ունի պահեստներ Ռուսաստանի բոլոր մեծ քաղաքներում:
ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ
Դօլգինսկի պր., 21, Աբախտ. Ընկ. շինութ.
ՏԵԼԵՖՕՆ № 355.
ԳՆԵՐՈՒ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ
ՆՄՈՒՇՆԵՐԸ ԶՐԻ

ՄԱՅԻՍԻ 1-Ի ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ

7 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ռ., 6 և 7 ամսվ. 6 ռ., ամսակ. 1 ռ. Ամերիկա՝ տարեկան 6 դօլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ռ., Թիւրքիա՝ 120 ղրուշ:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն, նոյնպէս և 40 կօպ. (կարելի է և նամակադրոշմով):

Երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.: Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°“ ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Մարգարիտ և Յովհաննէս Ծատուրեանները ցաւօք սրտի յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին՝ առաջինն իր թանկագին ամուսնու, երկրորդն իր անմոռանալի հօր՝ Զաքարիայի 2-դ կարգի վաճառական

ՍՏԵՓԱՆ ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ ապրիլի 28-ի երեկոյեան: Մարմինը կը տարվի Խոջիվանքի եկեղեցին: Թաղումն այսօր, մայիսի 1-ին, Խոջիվանքի գերեզմանատանը:
483. 1—1

ՆԿԱՐՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ
Ն. Գ. Ի. ԳԱԲԱԵՎԻ
Բացված է առ. ժամը 10-ից մինչև ժ. 4-ը ցեր. իր արհեստանոցում—Սուդէբնայա փող. տ. Իզմիրովի, № 47, Զուբալովի անուան շուններների տան դիմաց:
Մուտքի վճարը՝ 40 կոպ., աշակերտներին՝ 20 կոպ.: 481.

Ազգօգուտ Առևտրական Բանկի Վարչութիւնը
պատիւ ունի յայտնելու հասարակութեան, որ, համաձայն ֆինանսների մինիստրի թոյլտուութեան,
ՄԱՅԻՍԻ 1-Ի Բացված է Բաժանմունք ՋՈՒՂԱՅՈՒՄ (Երևանեան նահ.),
որը կատարելու է կանոնադրութեամբ թոյլատրված ամեն տեսակ բանկային գործողութիւններ:
(շ. կ.) (առ.) 471. 2—1

Թիֆլիսի Ժողովարան
Այսօր, շաբաթ, մայիսի 1-ին տեղի կունենայ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ
Հիւրերը՝ անդամների յանձնարարութեամբ՝ վճարում են մուտքի համար 1 ռ.:
482. 1—1

Կիրակի, մայիսի 2-ին
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ
(ԲԻՐԺԱ)
կը կայանայ
ՀԱՄԵՐԳ-ՊԱՐԵՐԵԿՈՅԹ
Դերասաններ՝ Ալլահվերդեան և Թորոսեան, Մասնակցութեամբ դերասանուհի տ. ՅԱՍՄԻԿԻ
կը ներկայացնեն
I
ՄԱՐԻԷՏՏԱ.
Վոդ. 1 գործ., փոխ. 2ուրարի
II
ՀԱՄԵՐԳ
Բարեհաճ մասնակցութեամբ տ. տ. Ե. Վ. Շրէդէր-Իվանովայի, Պ. Ղարուբաբայեանի, օպերային դերասաններ՝ Զարէհ Տիրացեանի, Վարդանեանի և ուրիշ:
Փիրումեան կը նուագէ սօլօ՝ Ֆլէյտայի վրա:
III
ՄԱՆԴՕԼԻՆԻՍՏՆԵՐԻ ԽՈՒՄԲ
ղեկավարութեամբ պ. Երամեանի՝ կը նուագէ եւրոպ. ժող. մեղեդիներ:
IV
ՊԱՐԵՐ
ԵՒՐՈՊԱԿԱՆ և ԱՍԻԱԿԱՆ,
որը կը տևէ մինչև ժամը 4-ը: Կը նուագէ զինուորական երաժշտական խումբը:
Սկիզբն է ճիշդ ժամը 8½-ին երեկոյեան
Տեղերի գները 40 կ.-ից մինչև 2 ռ.:
Տոմսակները վաղօրօր կարելի է ստանալ «Փարոս» կեօսկում, Երևանեան հրապ.:
Մանրամասնութիւնները պրոգրամայում:
Կարգադրիչ՝ Ալլահվերդեան և Շահինեան
(շ. կ.) (առ.) 479. 2—1

ՊԱՍՏԱՌՆԵՐ
(ՕԲՕԻ)
ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ
8 կ. սկսած մինչև 6 ռ. իւրաքանչիւր փութը (ռուլօ):
Ունի պահեստներ Ռուսաստանի բոլոր մեծ քաղաքներում:
ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ
Դօլգինսկի պր., 21, Աբախտ. Ընկ. շինութ.
ՏԵԼԵՖՕՆ № 355.
ԳՆԵՐՈՒ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ
ՆՄՈՒՇՆԵՐԸ ԶՐԻ

ԳՈՐԾՕՆՆԵՐԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ.

I

Դժուար կը լինէր ընդհանուր և միատեսակ պատասխան գտնել այն հարցին, թէ ինչն է կապում մի ազգի անդամներին միմեանց հետ:

Եթէ մասնաւորենք խնդիրը հայի վերաբերութեամբ՝ կը հանդիպենք հետևեալ հանգամանքներին:

— Կրօնն է միացնում հայերին,— ասում է մի ձայն:

Եթէ այդպէս է, ինչպէ՞ս են արդեօք կապվում միմեանց հետ լուսաւորչական, կաթոլիկ և բողոքական հայերը, որոնք պատկանում են տարբեր կրօնների:

— Լեզուն է միացնում,—պնդում է մի ուրիշ ձայն:

Եթէ լեզուն է հայերին միացնողը, հապա ինչպէ՞ս կարող են միանալ հայերէն խօսողները՝ Վրաստանի վերախօս, Քիլվարի և Մադրասայի թաթախօս, Խաչմազի թուրքախօս, Ունգարիայի ունգարախօս, Քիւրդստանի քիւրդախօս և արաբախօս, Հարաւային Ռուսաստանի ռուսախօս, Հնդկաստանի անգլիախօս հայերի հետ:

Կրօնը և լեզուն անշուշտ կապում են միմեանց հետ կրօնակիցներին և լեզուակիցներին. բայց նրանք դեռ ազգութեան հոմանիշներ չեն:

Լուսաւորչական կրօնը կապում է հայերին և ուսիսերին. բայց նրանք պատկանում են զանազան ազգութիւնների, ինչպէս ռուսները, վրացիները, յոյները և բոլգարները կրօնակից են, բայց հեռու են համազգային լինելուց:

Հայ լեզուն կապում է հայերին Ծալկայի հայախօս յոյների, Շիբակի հայախօս թուրքերի և քիւրդերի հետ, բայց այդ ազգագրական տարբերը բոլորովին տարբեր են միմեանցից: Այդպէս էլ ֆրանսիախօս շվեյցարացին, բելգիացին և կանադացին լեզուով մի են ֆրանսիացու հետ, բայց չեն կազմում մի ազգութիւն: Այդպէս նաև Հարաւային Ամերիկայի զանազան ազգութիւնները իւրացրել են մի ընդհանուր լեզու, սպանիականը, առանց ազգային միութեան և կապակցութեան:

— Գուցէ ժողովուրդների աշխարհագրական դասաւորութիւնը կարող էր լուծել այդ խնդիրը:

Ոչ: Գոնէ հայերի համար՝ ոչ: Հայերը իրանք ցրված են երկրագնդի բոլոր մասերում. իսկ իրանց հայրենիքում շատ տեղերում նոյնիսկ չեն կազմում մեծամասնութիւն: Նրանց հետ խառն ապրող ազգերը տարբերվում են իրանց արամադրութիւններով, իրանց լեզուով, կրօնով, յաճախ և ծագումով:

— Իսկ մի՞թէ ընդհանուր ծագումը դեր չէ խաղում,— լսվում է մի չորրորդ ձայն:

Գործնական կեանքում, գոնէ ներկայումս, դեր չէ խաղում, կամ մեծ դեր չէ խաղում:

Շատ քիւրդական գիւղեր ունեն հայկական ծագում, թուրքացած շատ գիւղեր դեռ յիշում են իրանց հայկական սերումը. բայց դա գործնական հետևանքներ չէ առաջացնում, ինչպէս չէր առաջացնի և այն, եթէ մի հայկական գիւղի ասէին, թէ նա մի ժամանակ պարսկական ծագում է ունեցել և ուրեմն այժմ էլ պէտք է իրան համարի պարսիկ: Ճիշդ է, մեր երկրում կան դէպքեր, որ ծագումը սկսում է ազդեցութիւն գործել, ինչպէս՝ վրացիների, աջարների, լազերի միջև նկատվող մերձեցումը, բայց հայկական դաւառներում այդպիսի մերձեցման երևոյթներ կամ բոլորովին չը կան, կամ շատ սահմանափակ թւով, և մահմեդական հայերի մերձեցման խնդիրը մինչև այժմ մնացել է միայն իբրև պատմական եղելութեան յիշատակութիւն:

— Գուցէ միջազգային քաղաքական դիրքն է միացնում հայերին միմեանց հետ:

Այդ ևս ոչ: Հայերը գտնվում են զանազան պետութիւնների մէջ և հրապակվում են քաղաքական տարբեր իրաւասութիւնների:

Եւ ուրեմն՝ ոչ կրօնը, ոչ լեզուն, ոչ աշխարհագրական դիրքը, ոչ ծագումը և ոչ քաղաքական միասնակեցութիւնը չեն միացնում հայերին մի ընդհանուր կապով միմեանց հետ:

Ընդհանուր կապի որոշ ընդհանուր գործօն չը կայ, չէ երևում:

Բայց այդ գործօնների հանրային չը լինելը դեռ չէ նշանակում, թէ մեր յիշած գործօնները դեր չեն կատարում: Նրանցից մի քանիսը խոշոր, միւսները միջակ, կամ սահմանափակ դեր կատարում են որոշ չափով, որոշ ծաւալով, որոշ խորութեամբ: Եւ այդ բոլորը անդրադառնում է ընդհանուր տրամադրութեան վրա:

Սակայն գուցէ հայերի ընդհանուր հակումները մի որևէ ցուցում են տալիս:

Այո, այդ հակումները կարծես ասում են, որ ազգի անդամների մէջ կայ մի ներքին գաղափարական և ազգագրական տենչ, որ թելադրում է համազգացութիւն, համասիրտ, համահոգի վերաբերմունք դէպի միմեանց, բայց միևնոյն ժամանակ չը պէտք է մոռանալ, որ ամեն մի զգացմունք, ամեն մի իղձ կարող է իրական գործօնի նշանակութիւն ունենալ, երբ նա հաշուի է առել կեանքի ազդեցութիւնները, միջավայրի բնաւորութիւնը, իրականութեան պայմանները:

Իսկ այդ պայմանները ի՞նչ ցուցում են տալիս մեզ:

Նրանք հեռանկարում են կուլտուրական համագործակցութիւն մի որոշ առտիճանով, ազգային մտաւոր ստեղծագործութեան և տաղանդի զարգացման առաքելութիւն, հանրային հասարակական բերկրանքների բաշխման ոգևորութիւն:

Իւրաքանչիւր ազդեցիկ գործօն կարող է հանդէս գալ կատարելու իրան վերապահված պատմական կամ կուլտուրական դերը. բայց առաւելագոյն զարգացում վերապահված է այն գործօններին, որոնք պարունակում են իրանց մէջ ստեղծագործող, բեղմնաւոր, շինարար, անընդհատ առաջադիմող տարրեր:

Այդ գործօնների նշանակութեան և նրանց գնահատութեան վերաբերութեամբ գոյացել են հոսանքներ մեզանում, որոնք և առիթներ են հանդիսացել տարբեր համախմբումների և գործառնութիւնների համար:

Այդ մասին մի ուրիշ անգամ:

Ա. Քալանթար

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳԱՀԻ ՇՈՒՐՋԸ

Լօնդոն, 28 ապրիլի

Համայնքների պալատի նիստերի դահլիճը լի է: Բոլորն էլ խոր ոգի մէջ նստած են լուռ, գլուխները բաց: Ասկվիթը կարդում է թագաւորի նամակը, որ արտայայտում է երկրի վիշտը: Ապա նամակում ասված է, որ Էդուարդ թագաւորի հոգատարութիւնը երկրի և ժողովրդի բարեկեցութեան մասին, նրա հմուտ և խելացի ղեկավարութիւնը, հասարակական պարտականութեան նրա անձնուրաց կատարումը յընթացս փայլուն թագաւորութեան և պանծալի արիասրտութիւնը վշտի և երկիւղի բօպէներին՝ երկար և երկար կը յիշեն յարգանքով նրա հպատակները Անգլիայում և գաղութներում: Ասկվիթն առաջարկեց երկու բանաձև՝ մինը ցաւակցութիւն յայտնելու և շնորհաւորելու Գէորգ թագաւորին, միւսը ցաւակցութիւն յայտնելու թագուհի մօր: Ասկվիթն ասաց. «Հանգուցեալ արքայի թագաւորութեան տարիները հարուստ էին դիպուածներով մեր յարաբերութիւնների համար օտարազգի պետութիւնների հետ, եղան մի շարք համաձայնութիւնների տարիներ: Երկրի ներսում ուժեղացան միութեան սերտ կապերը և անօրինակելի արագութեամբ ուռճացան սօցիալական, տընտեսական և սահմանադրական նախաձեռնութիւնների հետևանքները: Ազգի և պետական կեանքի բոլոր այդ արտայայտութիւնները պատմութիւնը կը կապէ մեծ ղեկավարի անուան հետ: Արտաքին գործերում նրա անձնական հոգը ազդեցութիւնը ոչ միայն խափանում էր պատերազմը, այլև պատերազմի շարժառիթները: Հանգուցեալը արժանացաւ կրելու համաշխարհային խաղաղութիւն հաստատողի համբաւ: Ներքին գործերում նա վեր էր կուսակցութիւնների կուից, նա ղեկավարվում էր սոսկ ընդհանուր շահի գիտակցութեամբ: Մենք յանձին նրա ունէինք բազմափորձ մի չէզոք միջնորդի և դատաւորի և մեծաժամանակ մեր տարաձիգութիւնների յարգելի կրողի և սահմանադրական ազատութիւնների կորովի պաշտպանի»: Ասկվիթն այնուհետև ջատագովեց թագաւորի խիստ աշխարհհայեացքը հասարակական պարտականութեան մասին, նրա տակը, որի մէջ նա չէր ճանաչում հակառակորդների, մարդկանց հետ վարվելու ձևը, այն կարողութիւնը, որ կայացնում էր այնպիսի վճիռ, որով միայն հնարաւոր էր լինում դուրս գալ վիճելի դրութիւններից, նրա մարդասիրութիւնը և լոյսերասիրութիւնը: Ասկվիթը, որ խօսում էր չափազանց զգացված, անկեղծ համակրանք յայտնեց պալատի կողմից թագուհի-մօրը: Խօսելով նոր թագաւորի մասին, Ասկվիթն ասաց. «Թագաւորը իր ուսերի վրա է առնում ներկայ բօպէին ծանրագին բեռը: Մենք թոյլ կը տանք մեզ հաւատացնել նրան, որ մենք ոչ միայն սիրաբորբոք յոյս ունենք, այլ և եռանդով հաւատում ենք, թէ նա ցոյց կը տայ իրան արժանաւոր յաջորդ մեծ թագաւորի, որի կորուստը մենք ողբում ենք»:

Ասկվիթից յետոյ ճառեց Բալֆուրը և մատնանշեց հանգուցեալ թագաւորի աչքի ընկնող յատկութիւնները, անուանեց նրան ամենասիրելի միապետներից մինը, որոնք թագաւորել են բրիտանական պետութեան մէջ:

Պատգամաւոր Էդուարս բանուորական կուսակցութեան անունից միացաւ նախկին հռետորների ասածներին:

Բանաձևերը ընդունվեցին ընդհանուր էութեան մէջ:

Լօրդերի պալատ: Նիստերի դահլիճը լի է: Վերին պալատին ներկայացված են միևնոյն բանաձևերը, ինչ որ ներքին պալատին: Արտասանվեցին համանման ճառեր: Գաղութների ստատսեկրէտարը յուզմունքից կանգ առաւ ճառի կիսում և հազիւ էր կարողանում շարունակել: Լէնսդաունը համոզմունք յայտնեց, որ չը կայ մի կառավարութիւն Եւրոպայում, որ չընդունէ՝ թէ Էդուարդ թագաւորի ժամով կորցվում է մի մեծ միջազգային ոյժ, որը այսուհետև ևս կը գործէ ազդեցութիւն:

Բանաձևերն ընդունվեցին լռելեայն: Երկու պալատները կը գումարվեն մայիսի 4-ին՝ մարմինը Վեստմինստէրի դահլիճը տանելու համար: (Հ. Գ.)

—

Լօնդոն, 29 ապրիլի

Թագաւորի մարմինը դագաղի մէջ դրված՝ ցուցադրված է զանազան դահլիճում:

Թագուհի Մարիա Ֆէօդորօվնան ներկայ եղաւ զանազան դահլիճում կատարված հոգեհանգստին: (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 29 ապրիլի

Էդուարդ թագաւորի մահվան առիթով ծովային վարչութեան մէջ հաստատվեց սուգ մինչև մայիսի 7-ը: (Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 29 ապրիլի

Ֆինլանդական հարցերի մասնաժողովի մէջ Գէգէչկորին մի յայտարարութիւն արեց, որ կառավարութիւնը և նրան պաշտպանող մասնաժողովի մեծամասնութիւնը հարկաւոր չեն համարում պաշտպանել իրանց սկզբունքային դիրքը, և, յայտնելով որ նրանց համար ամեն բան պարզօրէն նախավճռված է, հակառակորդների իրաւագիտական պատճառաբանութիւնները չեն հանդիպում նոյն տեսակի իրաւագիտական արգումենտների՝ առաջարկելով հարցը լուծել պարզ ձայնաւորութեամբ, կարծում է՝ թէ աշխատաւոր ժողովրդի ներկայացուցիչների քաղաքական արժանապատուութիւնը թոյլ չէ տալիս նրանց հետևել մասնաժողովի կործանիչ աշխատանքի ընթացքին: Գէգէչկորիի յայտարարութեանը մացաւ Միլիւկովը: Կադէտները և սոց.-դեմօկրատները հեռացան մասնաժողովի նիստից, որը շարունակեց օրինագծի յօդուածային քննութիւնը: (Հ. Գ.)

—

Հելսինգֆորս, 29 ապրիլի

Սէյմի երեկոյեան նիստում սաուդվեց սէյմի պատասխանը: Ճառեր չեղան: (Հ. Գ.)

—

Լօնդոն, 29 ապրիլի

Ուայտհէվենի ածխահանքերում պայթիւն առաջացաւ: Հանքերում գտնվում էին 136 մարդ: Ազատիչ խմբակը հասնեց 5 դիակ: Կարծում են, որ զոհվել են նոյնպէս ճեռացած բանուորները: (Հ. Գ.)

—

Բերլին, 29 ապրիլի

«Բերլիներ-Տագեբլատ» լրագրին հաղորդում են Աթէնքից. «Երէկ արքայական պալատի առաջ կայացաւ բողոքի խմբական միտինգ 70 օֆիցէրներ արձակելու դէմ: Գոյութիւն ունեցող անորոշ դրութիւնը աւելի ևս ծանրանում է կրետական պատգամաւորների երդումն տալով յունական թագաւորին»:

Պետական քարտուղար ֆօն-Շէն նախաձաշ տուեց ի պատիւ Բուզվէլտի: Երեկոյեան նրան ճաշ տուեց կայսերական կանցլերը: Ճաշից յետոյ կայացաւ բաուտ, որին ներկայ էին մինիստրները, ըէյխստագի, լանդտագի և պարոնների ժողովի փոխ-նախագահները, գիտութեան, գեղարուեստի, ֆինանսական աշխարհի, արդիւնաբերութեան և առևտրի ներկայացուցիչները: (Հ. Գ.)

—

Լօնդոն, 29 ապրիլի

Պետական Դումային ուղարկվեց երկու յայտագիր ֆինլանդական հարցի մասին. մէկի տակ ստորագրել են պարլամենտի 120 անդամներ, միւսի տակ—43 իրլանդացի նացիոնալիստներ. վերջիններիս յուշագիրը հակիրճ է և խորհուրդ է տալիս ռուս մեծ ժողովրդական ժողովին սանկցիա չը տալ Ֆինլանդիայի դարաւոր ազատութիւնները ոչնչացնելուն կամ պակասեցնելուն: Բրիտանական յուշագիրը աւելի ընդարձակ է. նրա մէջ երկիւղ է յայտնված՝ թէ կամենում են Ֆինլանդիային զրկել սահմանադրական այն իրաւունքներից, որոնցով նա մինչև օրս օգտվել է: Յուշագրում մատնանշված է թէ՝ ներկայ դիմումով Դումային՝ ոչ մի ցանկութիւն չը կայ միջամտել Ռուսաստանի ներքին

գործերին, այլ յուշագիրը նպատակ ունի պահել երկրի այն դրութիւնը, որ անհամեմատ նպաստաւոր է ռուս և անգլիական ժողովուրդների բարի համաձայնութեան և բարեկամական յարաբերութիւնների ամրապնդման ու զարգացման համար։ Ֆինլանդիայի սահմանադրութեան գոյութեամբ Մեծ Բրիտանիայի և Ֆինլանդիայի առնչութիւնները շարունակ զարգանում էին, հաստատվում էին բարեկամական կապեր։ Ամեն մի միջոց, որ ուղղված կը լինի երաշխաւորել սահմանադրական հիմունքները Ֆինլանդիայում, անկասկած կը ՁԵասէ այդ յարաբերութիւններին և ծանր ազդեցութիւն կանէ։ Այնուհետև բրիտանական յուշագիրը թուում է միջազգային իրաւագէտների յայտնի մեկնութիւնը և վերջանում է հետևեալ խօսքերով. «Մենք ողջունեցինք Ռուսաստանում վերջերս հաստատված սահմանադրական կառավարելու ձևը և այդ օրինակ ըէժիմի ժամանակ համարձակութեամբ ենք նայում ապագային այն յուսով, թէ սերտ կապ կը հաստատվի ռուս և անգլիացի ժողովուրդների միջև. սակայն խորին ցաւակցութեան գործ կը համարենք, եթէ Ռուսաստանի սահմանադրական կառավարութեան առաջին քայլերից միանգամայն նրա մի մասի սահմանադրական իրաւունքների ոտնահարումը, այն մասի, ուր սահմանադրութիւնն այնքան զգալի առաջադիմութիւններ է արել»։ Բրիտանական յուշագրի տակ ստորագրողների մեծ մասը լիբերալ կուսակցութեան անդամներ են։ (Հ. Գ.)

—

Բերլին.— Ռէյխստագում ստորագրութիւններ են ժողովում այն ուղերձի համար, որ ուղարկվելու է Պետական Դումային Ֆինլանդական գործերի առիթով։ («Ե.»)

ՐՈՒԶՎԷԼՏԻ ՃԱՌԸ ԲԵՐԼԻՆՈՒՄ

—

Բերլին, 29 ապրիլի

Այսօր համալսարանում Ռուզվէլտը, ներկայութեամբ կայսրի, կայսրուհու և պրինցուհիների կարդաց դասախօսութիւն ժողովուրդների համաշխարհային շարժման մասին։ Համալսարանի առջև գտնվող հրապարակի վրա շարքով կանգնեցին ուսանողական կօրպորացիաների աւագները հանդիսաւոր զգեստով։ Կայսրի, կայսրուհու, Ռուզվէլտի և նրա ընտանիքի ժամանելուց յետոյ, ակտի դահլիճը մտնելու ժամանակ Ռուզվէլտին ընդունեցին ոգևորութեամբ, երաժշտութեամբ, իսկ կայսրը՝ ողջոյնով։ Դասախօսութիւնը շարունակվեց մէկ և կէս ժամ։ Գոհունակութիւն յայտնելով այն բանի առիթով, որ իրան վիճակվում է հանդէս գալ Բերլինի համալսարանում վերջինի 100-ամեայ տօնեվարձին, Ռուզվէլտն ասաց, որ, որպէս դարգացման առաջին շրջանի մէջ գտնվող ազգի ներկայացուցիչ, նա դիմում է անմոռանալի պատմական անցեալով երկրի ներկայացուցիչներին, մանաւանդ եթէ հարուստ անցեալով այդ երկիրը նայում է գոռող վտահութեամբ ապագայի վրա, իսկ ներկայումս լի է ծաղիկ երիտասարդութեան ոյժերով. մի այդպիսի երկիր հանդիսանում է Գերմանիան։ Ապա Ռուզվէլտը պատմեց Եւրոպայի, մանաւորապէս Գերմանիայի կուլտուրայի պատմութիւնը վերջին 1000-ամեակի ընթացքում, ընդգծեց այն ազդեցութիւնը, որ ունեցել է Գերմանիան Միացեալ-Նահանգների վրա. գերմանական գաղթականութիւնը գերմանական շատ արիւն մացրեց ամերիկական ազգի մէջ։ «Մենք վերցրինք ձեզանից,— ասաց Ռուզվէլտը,—ոչ միայն շատ արիւն, որ հոսում է մեր երակներում, այլ և շատ գաղափարներ, որոնք սննդում են մեր մտքերը։ Մի շարք սերունդների ընթացքում ամերիկացի երիտասարդ մարդիկ գալիս էին ձեր համալսարանները։ Շնորհիւ այժմ թագաւորող կայսրի իմաստուն նախաձեռնութեան՝ երկու երկիրների սերտ բարեկամական շփումը մշտական, ոչ պատահական բնաւորութիւն ընդունեց»։ Բնորոշելով երեք հին կուլտուրաները՝ հրէական-բիբլիական, յունական և հռոմէական, հռետորը անցաւ գերմանական կուլտուրայի որոշմանը և մատնացոյց արեց նրա դերի և նշանակութեան վրա համաշխարհային շարժման մէջ։

Ի միջի այլոց, Ռուզվէլտը բնորոշեց եւրոպական կուլտուրան, մատնանշեց վերջինի սինտեզը, երկիւղած վերաբերմունքը դէպի իր պատմական ուսանդութիւնները և միաժամանակ յարգանք դէպի այլ երկիրների փորձը։ Խօսելով կուլտուրական երկիրների ընդհանուր կապի մասին, Ռուզվէլտը մատնացոյց արեց մեծաւոր աշխատանքի փոխադարձ ազդեցութեան վրա. երբ Միացեալ-Նահանգներում հարց է բարձրանում բանուորների ապահովագրութեան մասին, այն ժամանակ օրէնսդիրների ուշադրութիւնը ուղղվում է և դէպի Գերմանիան, և դէպի Նոր-Զէլանդիան։ Ուրախութեան և վշտի մէջ մարդկութեան բոլոր ժողովուրդները ամենասերտ կապերով են կապված։ Ժամանակակից քաղաքակրթութիւնը համաշխարհային շարժում դարձաւ, որն ընդունում է և տարերական բնաւորութեան վրա։ Վերջը Ռուզվէլտը խօսեց հայրենասիրութեան մասին, հիմնված սիրոյ վրա դէպի իր ժողովուրդը և յարգանք դէպի ուրիշ ժողովուրդները, և բարեմաղթեց, որ երիտասարդութիւնը արդարութեան գաղափարների տարածողը լինի միջազգային և ներքին յարաբերութիւնների մէջ։ Դասախօսութիւնից յետոյ յայտնվեց, որ Ռուզվէլտը փիլիսոփայութեան պատուաւոր դոկտոր է ընտրված։ (Հ. Գ.)

ԹԻՖԼԻՍԻ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Սալոնիկ, 29 ապրիլի

Թիւրքաց պատժիչ զօրագունդը, 12 բատալիոնից բաղկացած, բաժանվելով 4 մասերի, Զաֆար-Թայար-բէյի հրամանատարութեամբ յարձակվեց 12,000 մարդուց բաղկացած ալբանական զօրամասի վրա Զէրնօլէվի կիրճում։ Ալբանացիների հրամանատարներն էին Իսսա Բօլէտինացը և Հասան-Հիւսէյնը։ Կռիւները սկսվեցին ապրիլի 25-ից։ Դեռ ապրիլի 27-ին կռիւը շարունակվեց ամբողջ օրը։ Արտիլերիան հարկադրեց ապստամբներին դիրքերը փոխել։ Զինուորները սկսեցին կռուել սուիններով. ճակատամարտը արիւնահեղ էր։ Երեկոյեան ալբանացիները նահանջեցին լեռները։ Թիւրքերը կորցրին 18 զինուոր և 5 օֆիցէր սպանված, շատ էլ վիրաւորված։ Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, Զէրնօլէվի կիրճը մաքրված է ալբանացիներից. ճանապարհը դէպի Պրիզրէն բաց է։

Զինուորական մինիստրը եկաւ Ֆէբիզովիչի։ Այնտեղ ուղարկվեց մի բատալիօն։ Ուսկիւբի բատալիօնների ապստամբութեան լուրը սխալ է։ (Հ. Գ.)

—

Աստարա.—Ապրիլի 26-ին այստեղ հեռագրական տեղեկութիւն ստացվեց Արդաբիլից, որ Եփրեմի զօրախումբը ընդհարվել է խօջաբեգլուեցիների հետ։ Այդ աւազակների խումբը, 800 մարդուց բաղկացած, բոլորովին ջարդվեց. սպանվեցին 200, վիրաւորվեցին 150, գերի ընկան 300 հոգի։ Բոլոր պարագլուխները՝ Խազար-խան, Սուլդզզ-խան, Ազա-բէկ, Էմիր-խան և Բահրամխան ձերբակալվել են։ («Ե.»)

—

Թէհրան.—Սիփէհդարը դարձաւ մինիստր-նախագահ և ներքին գործերի մինիստր, իսկ Սարդար-Ասադը՝ զինուորական մինիստր։ («Ե»)

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

—

Կ. Պոլիս, 21 ապրիլ

Զատկի տօնը անցաւ շատ խաղաղ. տարձանակներու շփոթն և աղմուկը ականջնիս չիլացուց։ Զէնք պարպելը, քրիստոնէական այդ մեծ տօնի առթիւ, յունական սովորութիւն մըն էր, որ քիչ-քիչ ուրեղ տեղ մուտ գտած էր մեր մէջ ալ։ Բարեբաղդաբար այս տարի յոյներն ալ մէկ կողմ դրին այդ սովորութիւնը, և կարգ մը անմեղ զոհեր, որ տարած են զատկական գնդակները, այս տարի չունեցանք։

Զատկին երկրորդ օրը, 19 ապրիլ, ս. պարիրարքը պաշտօնապէս ընդունեց վարիչ մարմինները։ Ընդհանուր ժողովի առեղապետը, Հրանտ Ասատուր, համառօտ ուղերձ մը կարդաց՝ խնդակցութիւն յայտնելով, որ նորին սրբազնութիւնը իր հիւանդութենէն ապաքինած և վերադարձած էր պարիրարքարան՝ ազգային վարչութեան գլուխը։

Պարիրարքը, ի պատասխանի իրեն եղած շնորհաւորութեանց, մաղթանքներուն և համակրական արտայայտութեան, ըսաւ, թէ մեծ յոյս կայ, որ յարաբերական խնդիրները լաւ ճամբու մէջ մտնեն։ Ինքը զգալով հանդերձ իր տկարութիւնը պարիրարքական պաշտօնի պահանջումներու մասին պիտի աշխատի՝ իր կարողութեանը ներածին չափովը՝ ազգին օժանդակութենէն քաջալերուած։ Հետևեալ քանի մը տողերը կարժէ լսել բառ առ բառ. «Այս վերածնութեան միջոցին սակայն, պէտք է որ ներքին համերաշխութիւն ունենանք. դժուարութիւնները կրնան դիւրաւ հարթուիլ։ Մենք չենք կրնար մոռնալ, թէ երկու եղբայրներ կամ նոյն ժողովրդի երկու հատուածներ իրարու դէմ կը զինուին։ Եթէ մենք ալիքին դէմ ալիք և կամ զէնքին դէմ զէնք հանենք, մեղք կըլայ այս ազգին. այն ժամանակ այս տառապած հայութիւնը կը կորսնցնէ իր գոյութիւնը, և մեր թշնամիները կը հասնին իրենց նպատակին։ Զենք ձեռքի տանք, եղբայրներ, Զատիկը մեր հաշտութեան միջոցը ըլլայ և այսպէս, իբր մեծ ազգ, պատկառանք ներշնչենք մեր դրացիներուն, ինչ որ մեր նախորդները ըրած են մինչև այսօր բարձր պահելով հայ անունը»։

Ներկաները ծափահարեցին այդ խօսքերը, գոհունակութիւն զգացին, բայց թէ իրապէս տեղի կուտան այդ խօսքերուն և արդեամբ պիտի ապացուցանեն թէ կը գարշին, կը խորշին եղբայրասպանութենէն. պիտի Ջանանն զիրար լսել, իրար հասկնալ, թոյլ չտալով որ անձնական թոյլ կիրքեր՝ թեթև, անօգուտ պայքարներու խանձը բորբոքեն։

Երէկ պատրիարքը, վարչութեան քանի մը անդամներու հետ, զատկական այցելութիւն տուաւ յունաց պատրիարքին, հայկաթոլիկներու տեղապահին, խնդակցութիւն յայտնելով Թէրզեան եպիսկոպոսի պատրիարքական ընտրութեանը մասին։ Այս շաբթու կընդունի սովորական այցելութիւնը Յովակիմ պատրիարքի։

Մեր ներքին լուրերու մէջ գլխաւոր հարցն է տակաւին ալբանական ապստամբութիւնը։ Կառավարութիւնը հաստատապէս որոշած է իր զսպողական ուժը զդացնել տալ, որով յանձն չառներ ոևիցէ միջամտութիւն. իր բարեկարգութեան ծրագիրը պիտի յայտնէ այն ատենը միայն, երբ ապստամբութեան դրօշակը կը ծալուի։

Քանի մը օրերէ ի վեր հրապարակի վրայ է Ելլեմական մինիստրին՝ Զավիդ բէյի հրաժարականը։ Զավիդ բէյը այն մինիստրն է, որու մասին անկարելի է անտարբեր գտնուիլ. ամէն շրջանակներու մէջ վրդով կայ։ Հրաժարականը ուաջ եկաւ հետևեալ պարագաներու մէջ։ Երեսփոխանական ժողովը, կարգ մը ձրիակերներու թոշակի հետ, ջնջեց կայսերական վեց փեսաներու ամսաթոշակները։ Զավիդ բէյը, ատկէ զգածուած, գրած է հրաժարականը և զրկած վարչապետին։

Հակկը փաշա ոչ միայն չէ ընդունած հրաժարականը, այլ յայտարարած է, որ եթէ հարկ է, ամբողջ դահլիճը պէտք է քաշուի։ Ու վրդով մը, որ շատ անժամանակ է երկրին ներկայ հանդամանքներուն մէջ։ Կըսուի թէ Զաւիդ բէյ պէտք չէ վարկաբեկութիւն նկատէր կայսերական փեսաներուն ամսաթոշակին ջնջումը, որովհետև նոյն օրը իր բերած ցանկին մէջ ջնջուած են կարգ մը առանձնաշնորհեալ ձրիակերներու ամսաթոշակներն ալ, ու ատոնց մասին ելեմտական մինիստրը դժգոհութիւն յայտնած չէ։ Ի՞նչ պատճառ կար ուրեմն, որ զանազանութիւն կը դնէ Զաւիդ բէյի մտքին մէջ։ Կայսերական փեսաները, փեսայ ըլլալէ առաջ, անուշադիպ է օժտուած ըլլան այնպիսի յատկութիւններով, նիւթական և բարոյական առաւելութիւններով, որոնցմով իսկապէս արժանի հանդիսանան կայսերական իշխանուհիներուն ձեռքը բռնելու։ Ու եթէ կան արդէն այդպիսի առաւելութիւններ, ինչ հարկ այդ փեսաները դնել ձրիակերներու շարքը, հասարակաց գանձէն կերակրուելու շնորհի մը ներքև։ Այդպէս՝ եթէ ոչ սխալում մը, լոպէական անմտագրութեան մը սահեցումը և կամ գոնէ տկարութիւն մը դէպի կայսերական փեսայ-անձնաւորութիւն ունեցած պէտք է ըլլար Զաւիդ բէյը՝ հրաժարականի հարց մը մէջ տեղ բերելու համար քաղաքական այնպիսի բոպէներու մէջ, ուր հայրենասիրութեան պէտքը ալ առելի շեշտելի էր։

Հակկը փաշա, սահմանադրութեան 35-րդ յօդուածի տարմադրութեան համաձայն, դիմում պիտի ընէ պարլամենտին, բացատրութիւններ պիտի տայ, և յուսալի է, որ հաշտութեան կէտեր գտնէ։ Սամ. կօմիտէի կուսակիցները, կանխաւ կարծիքի փոխանակութիւն ընելով, պիտի օժանդակեն Հակկը փաշային։

Հարցը սա է, որ Զաւիդ բէյ ամէն վըստահութիւն կը վայելէր արդէն պարլամենտի մէջ. մէկ քանի առանձնաշնորհեալ ձրիակերներու թոշակին ջնջումը չնկատեց իր մասին անվստահութիւն. կայսերական փեսաներու թոշակի մասին չկրցաւ նոյնքան արդարասէր գտնուիլ, առարկելով թէ անոնք պէտք ունին դրամական նպաստի։

Հաւանաբար, միջին ճամբայ մը գտնուի, այսինքն տեղի տայ պարլամենտը. բայց արդարը էր, որ Զաւիդ բէյ, իր անձին համար ունեցած համակրանքովը, նեղը դնէր պարլամենտը։

Շահէն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

—

Հինգշաբթի, ապրիլի 29-ին, կայացաւ Թիֆլիսի Հայ Գիւղատնտ. և Տնայնագործ. Ընկերութեան ընդհանուր ժողովի նիստը անդամների և հիւրերի Ներկայութեամբ։

Նախ քան հերթական խնդիրների քննութեան անցնելը, նախագահ Ալ. Բալանթար յայտնեց, որ նրա մօտ մի քանի անգամ եկել են Վասպուրականի և Թիւրքահայաստանի միւս մասերից Թիւրքահայեր՝ ստանալու ցուցումներ գիւղատնտեսական բարեփոխութիւնների մասին։ Օսմանեան սահմանադրութեան հրատարակվելուց յետոյ Թիւրքահայերը, հնարաւորութիւն ունենալով վերադառնալ իրանց հայրենիքը և նորից զբաղվել գիւղատնտեսութեամբ, ցանկանում են կատարելագործութիւն մացնել ժողովրդական արհեստի մէջ։ Մի քանիսը գնեցին կատարելագործված գութաններ, զատիչներ, գերանդիներ և ուրիշ գործիքներ, միւսները վերցրին իրանց հետ դանազան արժանիների և ծառիների սերմեր և այդպէս գնացին մայր երկիր։ Այժմ Վարագայ տօնի առիթով վասպուրականցիները հերթական են դարձրել գիւղատնտեսական կրթական դասախօսներ հրաւիրելու խնդիրը։ Միևնոյն ժամանակ կազմվել են մասնաւոր ընկերակցութիւններ՝ ներժուծելու երկրի մէջ գիւղատնտեսական գործիքներ։ Նրանք դիմում են մեր ընկերութեան և մեր մասնագէտների աջակցութեան։

Ա. Աթանասեան յայտնեց, որ նա ունեցել է հէնց այդ օրը մանրամասն զրոյց Վանից եկած Զիթեչեանի հետ, որը ունի յանձնարարականներ թէ Թիւրքական և թէ ռուսական պաշտօնական անձերից և ներկայացնում է վստահելի առևտրական ձեռնարկութեան ներկայացուցիչ։ Նա կամենում է գրաւել ռուսական գործարանատէրերի ուշադրութիւնը դէպի Թիւրքիան, որտեղ սկսում է զարգանալ և ընդարձակվել պահանջ գիւղատնտեսական գործիքների և մեքենաների։

Ս. Մալխասեանը գտնում է, որ եւրոպական և ամերիկական գործիքները կարող են ուժգնապէս մրցել, ունենալով աւելի էժան և յարմար մուտք դէպի Թիւրքական հողերը։

Որոշվեց զբաղվել յարուցված խնդրով Զիթեչեանի և ուրիշ վասպուրականցիների մասնակցութեամբ։

Նախագահը դիմելով հերթական խնդիրների քննութեան՝ յայտնեց, որ ընկերութեան վարչութիւնը ստացել է Ալէքսանդրօպօլից մի գրութիւն, որով քառասունից աւելի անձեր ցանկութիւն են յայտնում բանալ ընկերութեան ճիւղ այդ քաղաքում։ Վարչութիւնը իր կողմից արել է իր դրական որոշումը և յայտնում է ընդհանուր ժողովին ի գիտութիւն։

Նախագահը այդ առիթով յայտնեց, որ Ալէքսանդրօպօլի ճիւղը կարող է մեծ դեր խաղալ, եթէ գործին նուիրվի եռանդով և բարեխղճութեամբ։ Ինքը Ալէքսանդրօպօլը ունի աւելի քան 3000 դեսեատին հող և նրա բնակիչների մի ստուար թիւ զբաղված է երկրագործութեամբ. միևնոյն ժամանակ Ալէքսանդրօպօլը կենտրոն է Շիրակի, որի գիւղական ազգաբնակութիւնը կարօտ է ղեկավարող գործունէութեան գիւղատնտեսական բարեփոխութիւնների ասպարէզում։

Ժողովականները յայտնեցին իրանց համակրութիւնը նոր բացվող ճիւղին։

Ա. Աթանասեան զեկուցեց այն փորձերի մասին, որոնք կատարվեցին Ալէքսանդրօպօլում և Ղազլչախչախում ապրիլի 21-ին, 22-ին և 23-ին։ Այդ փորձերի նկարագրութիւնը և նրանց տուած արդիւնքները շարժեցին ունկնդիրների հետաքրքրութիւնը։ Զեկուցման գլխաւոր էութիւնը հաղորդված կը լինի «Գիւղատնտես» թերթում և մասամբ յայտնի է «Մշակում» լոյս տեսած նկարագրութիւններից։

Ա. Բալանթար արեց լրացուցիչ զեկուցում Շիրակի թոչնապահութեան, մեղուաբուծութեան մասին և հաղորդեց վաստակաւոր դաշտային առնէտների երևալու մասին Անիի շրջանում։

Բժիշկ Աղասարեան կարդաց մի զեկուցում մածնի սննդարար և բժշկական նշանակութեան մասին։ Զեկուցումը առաջ բերեց հետաքրքրական զրոյց, որին մասնակցեցին բժ. Բարայեան, Մելիք-Բախտամեան, Զուբարեան, Խարպեան, Միրզոյեան, Փիրալեան, Աթանասեան, Բալանթար և ուրիշներ։

Այնուհետև Ա. Բալանթար կարդաց զեկուցում «Փորձադաշտերի և ցուցադաշտերի նշանակութեան և կազմակերպութեան մասին», նկարագրելով այն ընդարձակ գործունէութիւնը, որ տեղի ունի արտասահմանում և Ռուսաստանում կրթական այդ սիստեմի իրագործութեան շուրջը։

Ա. Փիրալեան բացատրեց ցուցադաշտերի գործնական նշանակութիւնը։

Խնդրի քննութիւնը ժամանակի սղութեան պատճառով որոշվեց յետաձգել մինչև հետևեալ հերթական նիստը, որի մասին առանձին կը յայտարարվի։

ՄԵԾ ՀԵՂԵՂ ԹԻՖԼԻՍՈՒՄ

—

Ապրիլի 29-ին, երեկոյեան ժամը 7-ից Թիֆլիսում սկսեց տեղալ առատ անձրև, որ յետոյ փոխվեց կարկտի։

Շուտով քաղաքի զանազան փողոցներում կատարեալ հեղեղ ներկայացաւ. ջուրը գետերի նման սկսեց ժամ ու կէս շարունակ հոսալ, օրինակ՝ Կիրօչնայա, Աւճալեան և Պեսկովսկայա փողոցներով, Հալաբարի, Վերայի, Նաթլուղի, Նախալովկայի և այլ քաղաքամասերի շատ տեղերով։ Կանգ առաւ կառքերի, էլեքտրաքարշի երթևեկութիւնը և մարդկանց անցուդարձը երկար ժամանակ։ Հեղեղից ՁԵասվեցին բազմաթիւ հին շինութիւններ, առաւելապէս Նախալովկայում և Հալաբարում։ Մի քանի տներ փլվեցին։ Զուրը Աւճալեան, Պեսկովսկայա և ուրիշ փողոցներում մտաւ ներքնայարկերն ու նկուղները և փչացրեց այնտեղ պահվող ապրանքները։ Հեղեղի պատճառով յետաձգվեց Զուբալովեան ժողովրդական տանը նշանակված հայկական ներկայացումը, որովհետև անհնարին էր փողոց դուրս գալ կայծակախառն շարունակվող անձրևի և փոթորիկների առաջացած սելաւի պատճառով։

Համաձայն ոստիկանական տեղեկութիւնների, առ այժմ պարզ յայտնի են հետևեալ դժբաղդ դէպքերը։ 11-րդ քաղաքամասում, Աֆանասիեվսկայա խզ. № 6 տանը ջուրը ծածկեց Յարութիւն Վալադեանի փուռը և Անտոն Նաղիրաշվիլիի մանրուքի կրպակը։ ՁԵասը մօտ 500 ռուբլու է։

9-րդ քաղաքամասում, կօզակ Իվան Ներշը, անցնելով Բէուտովսկայա փողոցով և կամենալով անցնել փողոցի միւս կողմը, ջրի ուժեղ հոսանքից վայր ընկաւ և տարվեց ջրից 190 քայլ, բայց մարդիկ վրա հասան և ազատեցին նրան խեղդվելուց։ Վնասվածին տարան բատալիօնը։

Կրասնագօրսկայա փող. և Օսիպովսկի նրբանցքի անկիւնում № 10 տանը ջուրը մտաւ 9-րդ քաղաքամասի ոստիկանատան քաղաքապահ Եփրեմ Եգօրովի և Եֆիմ Տրիխլէբովի բնակարանը. սենեակում գտնվող նրա կին Սօֆիան և նրա 3 և 2 տարեկան երեխաները և նրա ծառօթ գրագիր Դմիտրի Մանչէնկոն իր կնոջ Ագրիպինայի և պօստային ծառայող Գաբրիէլ Կօշէվի հետ ազատվեցին, իսկ միւս ոստիկանի կին Ֆրանցիսկին, որը միևնոյն ժամանակ յղի էր, իր 5 տարեկան տղայի հետ խեղդվեցին. կանչվեց հրդեհաշէջների խումբը, որը սկսեց ջուրը դուրս տալ։ Երկու դիակներն էլ ուղարկվեցին հիւանդանոց, ուր և ուղարկվեց Տրիխլէբովի ընտանիքը բժշկական օգնութիւն հասցնելու համար։ Յիշեալ ոստիկանների ամբողջ գոյքը ջուրը փչացրեց։

8-րդ քաղաքամասում, Սուրբ-Կարապետի ձորի մէջ ջուրը հիմքից քշեց տարաւ № 33 տունը, բայց կեցողները կարողացան իր ժամանակին դուրս գալ և մարդկային զոհեր չեղան։ Նօվօ-Արսէնալնայա փող. անկիւնում գծից դուրս եկաւ էլեքտրաքարշի վագոնը։

Լուրերին նայած՝ ջուրը քշել և կուրն է ձգել մի տղամարդու, մի հնոյ և մի երեխայի, էշի հետ։ Բացի դրանից 8-րդ քաղաքամասում ջուրը ծածկեց ամբողջապէս փողոցները. ՁԵասվեցին աղքատ մասերը։

Հեղեղի պատճառած այլ ՁԵաններն առայժմ յայտնի չեն։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

—

Վերջերս մեզանում փորձեր են անվում տալու պատմական տեսութիւններ և հանդէս են գալիս հայոց նոր գրականութեան պատմութեան փորձերին, սակայն մինչև այժմ ամենևին չարծարծվեց մի ուրիշ խնդիր. արդեօք մի այդպիսի աշխատանք կատարելու ժամանակը հասե՞լ է։

Ըստ երևոյթին, այս հարցմանը պէտք է դրական կերպով պատասխանել։ Ասողներ կը լինեն, որ ընթերցողին պէտք է ծանօթացնել հայոց նոր գրականութեան զարգացման հետ։ Շատերը նոյնիսկ այդ վերնագրին համապատասխան բովանդակութիւն ունեցող գիրք ապարէզ հանելը շատ մեծ պատասխանատուութիւն պահանջող գործ կը համարեն։ Բայց ով հասկանում է, թէ ինչ ասել է պատմութիւն գրել, և դիտէ, թէ ինչ դժուարութիւններ է ներկայացնում հայոց կեանքը այժմ ընդհանրացումներ հանելու համար,—նա շատ բնական կը համարէ այստեղ արտայայտված հարցը։

Կար ժամանակ, երբ գրականութեան պատմութիւն գրելիս զեկավարվում էին այն աշխարհահայացքով, որ գրականութիւնը ներկայացնում էր իբրև կեանքի միւս կողմից կտրված երևոյթների մի շղթայ։ Այդպիսի աշխարհահայացքի տէր մարդիկ գրականութեան պատմութիւն գրելու համար բաւական էին համարում խնամել հեղինակների կեանքի մասին մի քանի տեղեկութիւններ, ծանօթ լինել նրանց երկերի բովանդակութեանը, ունենալ մակերևոյթային կարծիքներ տուաւել երկերի գեղագիտական արժէքի մասին, դասաւորել նիւթը ժամանակագրական կարգով, և անապատաստ է գրականութեան պատմութիւնը։ Այդպիսի աշխարհահայացք դաւանող անհատներ գրականութեան պատմութեան փոխարէն տալիս էին—և դեռ շարունակում են տալ—մի շարք յօդուածներ, որոնցով նրանք հեղինակներին քննում էին միմիայն գեղագիտական տեսակէտով։ Նրանց հետաքրքրում էր ի՞նչպէս-ը և ոչ թէ ի՞նչ պատճառով հարցը։

Այժմ անցել է այդ աշխարհահայացքի դարը։ Գրել որևիցէ պատմութիւն, բայց երևան չը հանել երևոյթների պատճառականութիւնը, նրանց անհրաժեշտօրէն միմեանց յաջորդելը՝ այդ համարվում է գիտութեան անհամապատասխան մի գործ։ Երևոյթների՝ ժամանակագրական կարգով միմեանց յաջորդելը նկարագրել առանց պատճառաբանօրէն բացատրութեան՝ նշանակում է ոչ թէ պատմութիւն ներկայացնել ընթերցողին, այլ տարեգրութիւն. իսկ այս երկուսի միջև սարեր ու ձորեր կան։ Եթէ մէկը ուզում է գրականութեան զարգացումը գիտականօրէն պատկերացնել, նա պարտաւոր է ցոյց տալ, թէ ինչ կոնկրետ պատճառներ առաջացրեց անհրաժեշտօրէն գրական իւրաքանչիւր երևոյթ։ Ընդհանուր գիծերները այստեղ նոյնպէս անշօր են, ինչպէս և ուրիշ որևէ գիտութեան մէջ։ Պէտք է լուրջ, խոր ուսումնասիրութիւն գրական երևոյթների հետ կապված՝ կեանքի միւս բոլոր կողմերի, որովհետև գրականութեան զարգացումը կախումն ունի ոչ թէ այս կամ այն հեղինակի ընդունակութիւններից, այլ ամբողջ միջավայրի փոխադարձութիւններից։

Արդ՝ հայոց նոր գրականութեան պատմութիւնը գիտականօրէն պատկերացնողի համար արդեօք պատրաստի նիւթեր մատակարարում է մեր գրականութիւնը։ Արդեօք կատարված է մասնաւոր երևոյթները

լուսաբանող, հսկայական ջանքեր ու ոյժեր պահանջող այն «սև աշխատանքը», որի վրա հիմնվել կարողանայ լայն ընդհանրացումներ անելու ցանկութիւն ունեցողը։

Ունենք արդեօք հայ հեղինակների կենսագրութիւնները։

Ունենք նոյն հեղինակների երկերի մասին ուսումնասիրութիւններ։

Ունենք արևմտեան հոսանքների ազդեցութիւնը նկարագրող թէկուզ մի լուրջ գրուածք։

Ունենք մաժուլի և հրապարակախօսութեան պատմութիւն։

Ունենք նոր դարի հայոց կուլտուրայի տնտեսական, քաղաքական, կրթական, հոգևոր և այլն կողմերը երևան հանող ուսումնասիրութիւններ։

Չունենք, ընթերցող, և, աւաղ, շուտով էլ չենք ունենայ։

Ապա ինչ հանգամանքներում է գրվում հայոց նոր գրականութեան պատմութիւնը՝ իբրև գիտութիւն։

Լսեցէք, թէ ինչ է ասում գիտութեան ծանրութիւնը զգացող պատկառելի պատմաբանը (Հ. Թ. Բօկլ)։

«Հեռու չէ այն ժամանակը, երբ մարդու պատմութիւնը կը գրաւէ իրան արժանի տեղը, երբ պատմութեան ուսումնասիրութիւնը կը համարվի բոլոր զբաղմունքներից ամենագնիւը և ամենադժուարը, և բոլորը պարզ կը տեսնեն, ու այս առարկայի աջողակ մշակման համար անհրաժեշտ է ունենալ լայն եւ բազմակողմանի խելք եւ առաջ ծանօթութիւններ մարդկային գիտութեան բոլոր բարձր ճիւղերից։ Երբ բոլորը լիով կը գիտակցեն այդ, այն ժամանակ պատմութիւն կը գրեն նրանք, որոնց ոյժը կը պատի այդ աշխատանքին. այն ժամանակ պատմութիւնը կը խլվի թեթևամիտ դատարկախօսների ձեռքից»։

Թադ. Աւդալբեգեան

ՄԵՐ ՊԱՆԴՈՒԽՏՆԵՐԸ

Նոր-Բայազէտ, 10 ապրիլի

Վեհ. Կաթողիկոսը իր անդրանիկ կոնդակում չէ մոռացել յիշելու նաև գաղթականութեան մասին, դէմ լինելով ազգի՝ օտարութեան մէջ լինելուն, քանի որ պանդխտութիւնը կամ գաղթականութիւնը քայքայում, մաշում է նրա կեանքը։ Եւ իրաւ, դա մի այնպիսի իրողութիւն է և գաղթականութեան վնասակարութիւնը այն աստիճան ակնյայտնի, որ Վեհ. Հայրապետի աչքից չէ վրիպել իր անդրանիկ կոնդակում յորդորելու՝ յետ կենալ օտարութեան մէջ մաշվելուց և մայր-երկրից հեռանալուց...

Եւ ճշմարիտ։ Պանդխտութիւնը մի այնպիսի վտանգաւոր դրութիւն է ստեղծում տեղ. ժողովրդի համար, որ կարիք չը կայ այդ մասին երկար խօսելու, և ամեն ոք, ով ճաշակել է օտարութեան դառնութիւնները, ֆիզիկական և բարոյական զրկանքները, նա հոգով-սրտով դէմ է պանդխտութեան։ Ոչ մի յորդոր, ոչ մի աղերս, ուղղված մեր պանդուխտներին նոյնիսկ իրանց սիրելիների, ազգականների և մերձաւորների կողմից, ոչինչ ազդեցութիւն չէ կարողանում անել պանդխտողների վրա։ Ինչով կարող ենք յետ պահել կամ սահմանափակել պանդխտութիւնը մեր երկրի օտարականների վերաբերմամբ, երբ նրանք տնտեսական և այլ կարիքներից ստիպված հեռանում են ամեն տարի դէպի օտարութիւնը, դէպի մեծ քաղաքների մթնոլորտը՝ յատկապէս ապրուստ ճարելու համար։ Ամեն տարի մենք հազարաւոր բազմութեամբ պանդուխտներ ենք տալիս մեծ վաճառական քաղաքներին, որտեղի կեանքին հետզրնեղ ընտելանալով՝ մեր պանդուխտները տարիների ընթացքում դէպի իրանց են քաշում նաև իրանց ընտանիքը—կին, երեխայ և այլն—թողնելով բոլորովին խոպանացած իրանց հողն ու ջուրը, իրանց արան ու արօտը...

Այս բոպէին մեր քաղաքում մի ամբողջ թաղաթաղին—Բանդի-Մահլա անունով—աւերակների է նմանում։ Տուն չեք գտնի, որում իր սեփական կամ իսկական տէրը ապրելիս լինի։ Նրանցից մի մասը փակ է, միւս մասը տրված է քրէհով մի հինգ-վեց ամարով՝ 1 ր. ամիսը, երրորդ մասը՝ թողնված ձրիապէս որևէ աղքատ ընտանիքի բնակութեան և պահպանութեան (շինութեան) համար, չորրորդ մասը քանդված է, դռները կոտրած, լուսամուտները տրված, պատերը փուլ եկած և այլն.... Ճիշդ աւերակների մի պատկեր։ Զէ՞ որ ռուսաց առածն ասում է՝ «безъ хозяина товаръ пропадетъ»։ Եւ այդ թաղի բնակիչները չուելով դէպի Թիֆլիս, Բագու, Բաթում և այլ տեղերը՝ բոլորովին մոռացել են իրանց տունտեղը, իրանց մայր-հայրենիքը։ Թէպէտ նրանցից ոմանք, գլխաւորապէս ընտանիքները, սրտի խորքից մաս են քաշում, որպէսզի մի օր միջոց գտնեն յետ վերադառնալ իրանց «վաթանը» և իրանց հայրենական օջախից ծուխը բարձրացնեն, շենացնեն, բայց և այնպէս անկարող են այդ անելը դրված զանազան տնտեսական հանգամանքներից։ Եւ մենք, որքան էլ որ դէմ լինենք մեր երկրի պանդխտութեան, որքան էլ սրտով ցանկանք մեր պանդուխտների վերադարձը և նրանց կապվելը մայր-հողի հետ,—դա մեզ չի աջողվի, թող թէ ուրաքանչիւր տարի հազարաւոր նոր անապիրներ թողնելով քաղ. վարչութիւնից՝ որից նոր աւելացնում ենք նրանց թիւը...

Եւ ճիշդ որ՝ ոչ մի յորդոր, ոչ մի աղերս, ինչպէս ասացի, անկարող է լինում պանդրխտելու մտքից յետ պահել մեր երկրի օտարականներին։

Չը կայ հայ կովկասում մի այնպիսի տեղ, որը այնքան թւով պանդուխտներ ունենար օտար վայրերում, ինչպէս Նոր-Բայազէտը։ Այդ կողմից մեր հուչակաւոր հին Դողթանը, Հայոց-Ձորը, Դարալագեազը, Հին-Նախիջևանը և այլն անշուշտ կը նախանձէին մեր օրհնեալ «քաղաքին» (Նոր-Բայազէտի մականունը), որի ազգաբնակութեան $^1/_3$ ը այս բոպէիս գտնվում է պանդխտութեան ծոցում... ուր խայտաբղէտ կեանքի ժխորը, իբրև գեղխութեան մի անսովոր արտայայտութիւն, զզուեցրել է մեր պանդուխտներից շատերին, որոնք երբեմն սիրում են յիշել իրանց հայրենի օջախը, բայց... բայց չեն սիրս անում վերադառնալ... Տեղի աղքատութեան սև ուրուականը պատկերանում է նրանց առաջ... Իսկ եթէ գտնվում է որևէ մէկը, երբ տարիներից յետոյ, «կարօտն ի սրտին», վտահանում է վերադառնալ իր հայրենիքը, նա երկար չէ կարողանում դիմանալ և, մի ժամանակից յետոյ, դարձեալ կարիքից ստիպված, օտարութեան ցուպը նորից ձեռք է առնում, նորից դիմելով դէպի գործարանական մեծ քաղաքների մաշող մթնոլորտը...

Որպիսի զորեղ և դրական միջոցներով պէտք է դէմ դնել պանդխտութեան,—ահա մի բարդ խնդիր, որ կարօտ է լուրջ ուշադրութեան։ Ապա թէ ոչ՝ լոկ խօսքով յորդորել մարդկանց յետ կենալ պանդխտութիւնից, հաւատացած ենք, ոչնչով չի օգնի գործին։

Գ. Սինանեան

ՀՐԴԵՀ ՆԱԻԹԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՎԱԾ ԴՈՂՈՒԹԻՒՆ

Բալախանի, 26 ապրիլի

Նաւթաշխարհի «Պեատի գրուպպա» անուանեալ մասում երէկ սկսվեց անսպասելի հրդեհ։ Կրակը սկսեց «Աղբիւր» նաւթահանքի հորի «քեալլաչարբա» կոչված մասից։ Այդ նաւթահանքում այրվեց երեք հոր, ապա անցաւ Բաբաեվի նաւթահանքին, ուր լափեց հինգ հոր. չը նայելով քամին այնքան էլ ուժեղ չէր, բայց որովհետև մի քանի հանքեր իրար շատ մօտիկ էին, ուստի Բաբաեվի հանքից կրակը անցաւ Օրուջօվների հանքը, որտեղ էլ հինգ հոր այրվեց։ Այդպէս՝ այնուհետև կրակը անցաւ «Мовлутъ», Շըխ-Բալաեվի և Մէլիք-Աղամիրօվի նաւթահանքերը։ «Мовлутъ»-ից լափեց երեք, Շըխ-Բալաեվից՝ երեք, իսկ Մէլիք-Աղամիրօվից՝ մէկ հոր։ Ընդամենը կրակը վնասեց հինգ նաւթահանքի, այրելով 19 հոր և չորս նաւթահանքերի բոլոր մեքենաները և ունեցած նաւթը։

Հրդեհը վերջացաւ այսօր ցեր. ժ. 12-ին։ Վնասները ահագին են։

Այս օրերս Բօմանիայում Ա. Ի. Մանթաշեանի նաւթահանքում հրապարակ եկաւ մի՝ իր տեսակի մէջ չը տեսնված գողութիւն, որը զարմացրեց ամբողջ նաւթաշխարհի ղեկավարներին։ Մանթաշեանի այդ նաւթահանքը ամբողջ Բալախանիի աչքն է իր առատ նաւթահանքով և աղբիւրով, այնպէս որ այդ հանքը 30—40,000 պուդ նաւթ է տալիս իւրաքանչիւր օրը։ Ինչպէս ասում են, Բալախանիի ընդհանուր կառավարիչ Հ. Ա. Խաչատրեանին յայտնում են, որ հանքից քիչ հեռու գետնի տակից անցք է քանդվում, որը պիտի հասնէ այն կաթսաներին (բէգերվուարը), որոնց մէջ կենտրոնանում է հանքի նաւթը։ Եւ իրաւ, ոստիկանութեան միջոցով սկսվում է քննութիւն և երևան է գալիս մի ահագին անցք, որի միջից մի մարդ ազատ կարող է անցուդարձ անել։ Բէգերվուարներից 80 սաժէն հեռու գտնվում է մի շէնք, որը պատկանում է մի հայի և մի թուրքի. այդ շէնքի յատակից շրնված է գաղտնի դուռը, որտեղից և սկսված են աշխատանքները։ Անցքը քանդված է շատ խնամքով և ցեմենտով ամրացրած։

Ամենամաղալուն այն է, որ անցքը փորող մշակները, գործիքները և ցեմենտը նոյնպէս Մանթաշեանի հաշիւն են եղել, որովհետև գործարանի միջոցով են բանւոր մշակները Մանթաշեանի կասսայից իրանց աշխատավարձը ստացել և գողութեան անցքը պատրաստել։

Ձերբակալված են շէնքի տէրերը և մի քանի ծառայողներ։

Ամբողջ նաւթահանքի ղեկավար շրջանները զարմանում են այդ յանդուգն քայլի վրա, մանաւանդ որ մասնակցողները նոյն հանքում ծառայողներն են։

Բալախանիում կամ ընդհանրապէս նաւթաշխարհում նաւթ գողանալը, հարիւր հազարներ այդպիսի գողութեամբ դիզելը այնքան սովորական երևոյթներ են դարձել, որ գողութիւնը բացվելուց յետոյ գողերը միմիայն հեռացվում են 5—6 ամսվայ ռոճիկը ստանալով։

Նաւթի գինը ընկած է. արդիւնաբերողները անհանգիստ դրութեան մէջ են գտնվում. եթէ այդպէս շարունակվելու լինի, մի շարք սնանկութիւններ ակներև պիտի համարել։

Զատկական տօների հետ սկսվել է և սպանութիւնների, աւազակութիւնների սեզօնը։ Սպանեցին Մանթաշեանի Ուսպէնսկի նաւթահանքի գործակատարներից մէկին, Սմբատ Առաքելեանին, և Միրզոյեվի մի հայ ծառայողի և մի թուրքի էլ խեղդեցին։ Թալանեցին խանութներ և այլն։

Չը գիտենք քաղաքապետն է անուշադրութեան տուել նաւթահանքերը, թէ ստորադրեալ պաշտօնեաներն են անհոգ։

Ցանկալի է, որ քաղաքապետը Բալախանիի վրա լուրջ ուշադրութիւն դարձնէ, որովհետև, եթէ Բալախանին աչքաթող լինի, սպանութիւնները և գողութիւնները կը բազմանան, որով և կը թունաւորվի քաղաքի կեանքը։

Ս. Դարագաշ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Ճանապարհվել է Պետերբուրգից սենատոր Ռէյնիկէն իր աշխատակիցներով։ Նա դատական հաստատութիւնների գործերի քննութիւնը կը սկսէ Թիֆլիսից։

✦ Կովկասեան գլխաւոր իշխանութիւնը հաստատեց Փոխարքայի խորհրդի որոշումը՝ դատարան ի ձեռք տալու քր. պատժ. 377-րդ և 378-րդ յօդուածների մեղադրանքներով Գօրու նախկին գաւառապետ Բակրաձէին։

✦ Ալ. Խատիսեանը վերջացրեց քաղաքային թանգարան հաստատելու նախագիծը։ Ինչպէս յայտնի է, այդ թանգարանը հիմնվելու է ի յաւերժացումն քաղաքային ինքնավարութեան 35-ամեայ գոյութեան։

✦ Այժմս է միայն պարզվում, որ իր ժամանակին աղմուկ հանած Գելատի վանքի կողոպուտը կազմակերպել են նոյն վանքի միաբաններից երկուսը։

✦ Ապրիլի 29-ի երեկոյեան Թիֆլիսում կատարվեցին բազմաթիւ խուզարկութիւններ զանազան հաստատութիւնների և մարդկանց մօտ՝ մայիսի 1-ի առիթով։

✦ Դ. Միրզաեանի յօբելեանին մասնակցելու պատրաստակամութիւն է յայտնել Վրաց Թիւրմօնիական Ընկերութիւնը։

✦ Կովկասի Փոխարքան միջնորդել է կովկասեան հանքային ջրերի վարչութեան վերատեսչի առաջ, որ թոյլ տրվի հրէաներին ամառս բժշկվել ջրերում։

✦ Դուսայը մօտակայ նիստերից մէկում քաղաքային վարչութիւնը կառաջադրէ մի գրութիւն՝ երկարելու քաղաքի պայմանագրերը էլեքտրաքարշի վարչութեան հետ, նկատի առած այն հանգամանքը, որ վերջինս պատրաստակամութիւն է յայտնել ամեն կերպ ընդառաջ գնալ քաղաքի շահերին և կնքել քաղաքի համար ձեռնտու համաձայնութիւններ։

✦ Մայիսի 5-ին, Արտիստական Ընկ. ամարային շինութեան մէջ նահանգապետի թոյլատրութեամբ կը լինի զբօսանք յօգուտ «Լոյս» Ընկերութեան։

✦ Ի. Բալիշվիլին խնդրամատոյց է եղել նահանգապետին թոյլ տալու հրատարակել իրան Թիֆլիսում մի օրաթերթ, վրացերէն, «Նոր Ճանապարհ» (Ախալի Դգա) անունով։

✦ Ի նկատի ունենալով, որ Կիրօչնայա և Միխայլօվկայա փողոցների անկիւնում Մաղէրի շինութիւնը քանդել վերջացրել են և Կիրօչնայա փողոցի բերանը ընդլայնվել է, շուտով այդ տեղում կը կառուցվի էլեքտրաքարշի երկրորդ գիծ Վերայի էլեքտրաքարշի համար։

✦ Թիֆլիսի նահանգապետը հաստատեց հացի հետևեալ սակագինը. փռան մէջ թխվող 1-ին տեսակի փունտը $4^1/_2$ կ., 2-րդ տեսակի փունտը $3^1/_2$ կ., 3-րդ տեսակի փունտը՝ 3 կ., հաճարի ալիւրից պատրաստվող հացի փունտը $2^1/_2$ կ.։ Թոնիրներում թխվող 1-ին տեսակի փունտը $4^1/_2$ կ., 2-րդ տեսակինը 4 կ. և 3-րդ տեսակինը 3 կ. (տեղական ալիւրից)։ Լաւաշի 1-ին տեսակի փունտը $4^1/_2$ կ., 2-րդ տեսակի փունտը 4 կ.։ Յայտարարելով այս մասին ոստիկանութեանը, ոստիկանապետը կարգադրում է խստագոյնս հետևել, որ ոչ մի վրիպում չը լինի։

✦ «Լոյս» Ընկերութեան վարչութեան կողմից դերասան Գ. Միրզաեանի 25-ամեայ բեմական գործունէութեան յօբելեանի ներկայացուցիչներ են լինելու Ս. Մալխասեանց և Ա. Աւագեան։

✦ Գ. Խատիսեանի բեֆերատը՝ Անգլիայի ներկայ մինիստրական ճգնաժամի մասին՝ հասարակական կլուբում չի կարդացվի այսօր։ Դասախօսը նոյն տեղում կը կարդայ հայ վիպագիր Վ. Փրփղեանի մասին։

✦ Թիֆլիսի Հայուհեաց Բ. Ընկ. վարչութիւնը յայտնում է իր շնորհակալութիւնը հանգուցեալ Յ. Ս. Ղորղանեանի ժառանգներին, որոնք ի յիշատակ հանգուցեալի նուիրեցին Ընկերութեանը 100 ռուբլի։

✦ Սօչիի և Սուխումի միջև կանոնաւոր ավտոմոբիլների երթևեկութիւն է սահմանված։ Գծի վրա մշտապէս կան զանազան տեսակի քսանից աւելի ավտոմոբիլներ։

ՄԱՄՈՒԼ

Ինչպէս հեռագիրներից և թղթակցութիւններից գիտենք, այս ապրիլ ամսին Պետերբուրգում և Մոսկվայում կայացան մի շարք կոնդրէսներ և համագումարներ, ինչպէս գրողների համագումարը, անառակութեան դէմ կռուելու կոնդրէսը, Պիրոգովեան համագումարը, կրիմինալիստների կոնգրէսը և այլն։

«Рус. Вѣд.» թերթը այդ համագումարների մէջ տեսնում է ապացոյց, որ մեր մէջ լայն կերպով զարգացել է պահանջը՝ գիտական և հասարակական ոյժերի փոխադարձ հաղորդակցութեան, բայց,—ասում է նա,—թէև այդպիսի ժողովներ կազմելու փաստը կարող էր առիթ տալ խօսել ռուսական ազատ հասարակականութեան աջողութիւնների մասին, սակայն կեանքը խորտակում է միրաժները և իլլիւզիաները, ցոյց տալով որ իրականութեան մէջ պայմանները այլ են։ Լրագիրը ակնարկում է այն փաստին, որ համագումարներից մի երկուսը՝ դեռ չաւարտած իրանց պարապմունքները՝ փակվեցին։

Խօսելով գրողների համագումարի մասին ռուս թերթը ասում է, թէ այդ համագումարը չը պէտք է զբաղվի մաժուլի իրաւական դրութեան հարցով, թէև նա գումարվել է այնպիսի մի բոպէում, երբ ռուսական մաժուլը բացառապէս ծանր ժամանակներ է կրում։ Համագումարին մասնակցող գրողները և հրապարակախօսները պէտք է զբաղվեն միայն պրօֆէսիոնալ հարցերով, նրանք կը շօշափեն հրատարակիչների և աշխատակիցների միջև եղած յարաբերութիւնների խնդիրը, կը խօսեն պատուի դատարանի մասին, բայց ստիպված կը լինեն լռել ամենագլխաւոր հարցի մասին, այն է, թէ ինչ է պէտք տպագրական խօսքի և նրա գործիչների համար, որովհետև համագումարի ծրագրից հանված է մաժուլի իրաւական դրութեան հարցի քննութիւնը։

*

Նոյն թերթի Կ. Պոլսի թղթակիցը, խօսելով այն մասին որ կառավարող շրջանների շատ ներկայացուցիչները իրանց կոչման բարձրութեան վրա չեն կանգնած, առաջ է բերում երիտասարդ-թիւրքերի կուսակցութեան մի ակնաւոր անդամի կարծիքը հայ մինիստր Պետրոս էֆէնդի Հալաճեանի մասին։ Արդիւնաբերութեան և առևտրի այդ մինիստրը, ասել է նա, ընդհանուրի կարծիքով, շնորհիւ իր անձիրք և սահմանափակ մտքի, անպայման խոչընդոտ է հանդիսանում երկրի արդիւնաբերական զարգացման, թէև պարլամենտը նրան վստահութեան քուէ տուեց։ «Թէ հալաճեանը անպէտք է, դա ակնյայտ է ամենքի համար. աւելին կասեմ. նրա՝ իշխանութեան գլուխ կանգնելը ապացոյց է մեր ազգաութեան...»։ Գիտէք հէն առածը. մենք ունէինք մի սուլթան՝ Սէլիմ. նրա մեծ վեզիրը մեռաւ։ Սուլթան Սէլիմը որոնեց նոր սադրազամ և չը կարողացաւ գտնել։ Մի անգամ նա պատսպարեաւ և ինչ տեսնէ. կանգնած է մի երիտասարդ հիւսն, գեղեցկադէմ, և շատ զարմանալի ճարպիկութեամբ, նրբութեամբ կատարում է իր գործը։ Եւ սուլթան Սէլիմը վճռեց, թէ այդ երիտասարդ հիւսնից ընտիր սադրազամ դուրս կը գայ։ Նա վերցրեց հիւսն Ահմէդին, հրամայեց հագցնել նրան սադրազամական պատմուճան և նոր սադրազամի հետ, ձի նստած, գնաց Բ. Դուռ, որպէսզի այդտեղ «խաթթը հիմայուն»-ով յայտարարէ ժողովրդին հանդիսաւորապէս հիւսն Ահմէդին մեծ-վեզիր նշանակելու մասին։ Ճանապարհին հանդիպում են մի յուղարկաւորութեան թափօրի։ Նոր մեծ-վեզիր Ահմէդը նշան է անում, որ թափօրը կանգ առնի, մօտենում է մեռելի դագաղին, բարձրացնում է կափարիչը և մեռելի ականջին ինչ-որ փսփսում է։ Սուլթան Սէլիմը հիացած է։ «Ահա,—մտածում է նա,—ինչպիսի հիանալի մեծ-վեզիր գտայ. նոյնիսկ մեռելների հետ է խօսում»։ Երբ նորից ձի նստեց, սուլթան Սէլիմը հարցրեց նրան. «Ի՞նչ ասացիր դու մեռելին»։ Սադրազամը պատասխանեց. «Ես ասացի նրան. երբ կը գնաս հանդերձեալ աշխարհը և այնտեղ քեզ կը հարցնեն, թէ ինչ դրութեան մէջ է օսմանեան կայսրութիւնը, դու ասա միայն, թէ հիւսն Ահմէդը սադրազամ է դարձել։ Էլ ուրիշ բան չասես, դա բաւական է...»։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԵՐԲ ԵԿԵՂԵՑԻ, ԵՐԲ ԺՈՂՈՎՈՒՐԴ

—

Յունական՝ եկեղեցի բառը սկիզբներում նշանակել է և գործ է ածվել ընդհանրապէս ժողով, հաւաքում բառի մտքով. վերջերում դարձել և գործ է ածվել Քրիստոսին հաւատացողների ժողով, խմբակցութիւն։ Եկեղեցի բառը շէնք, տաճար չէ նշանակում. սրա ապացոյցն այն է, որ առաքեալները եկեղեցիներ կազմելով, եկեղեցիները հիմնելով՝ կենդանի մարդկանց համանման հաւատացողների ժողով, խումբ են կազմել և այդ խմբերի, այդ եկեղեցիների հետ յարաբերութիւն պահել։ Շատ դարեր քրիստոնէական եկեղեցիներ կային, բայց որոշ, ձեւաւոր հաստատուն շէնքեր դեռ ոչ։ Այս իմաստով, այս մտքով էլ հայոց եկեղեցի ասելով ընաւ չէ հասկացվում քարից կամ փայտից շինված շէնքը, այլ հայոց եկեղեցի ասելով ընդունվում և հասկացվում է այսօր էլ հայերի այն թիւը, այն բաղկացութիւնը, որ ընդունում է և դաւանում Քրիստոսի աւետարանը, Քրիստոսի վարդապետութիւնը իր ազգային հոգու ու մտքի թելադրած ոգեբընդունութեամբ ու արարողութեամբ։ Ուր այսօր էլ կը գտնվեն մեր ազգային կրօնը դաւանող ազգայիններ, այնտեղ կը գոյանայ, կը լինի հայոց եկեղեցի, թէկուզ նրանք չունենան յատուկ շէնք, կամ թէկուզ նրանց աւաքումը լինի վարձովի շինութեան մէջ։

Եւ այսպէս՝ եկեղեցին շէնքը չէ, այլ հաւանման դաւանակից քրիստոնեաների խմբակցութիւնը, կենդանի ժողովը։ Եկեղեցին՝ վայր, տեղ նշանակում է փոխաբերական մեթոդ։

Այս հետևողութեամբ՝ իսկական և փոխաբերական մտքերով միացած՝ մեր եկեղեցին այսօր էլ մնում է և հանդիսանում է եկեղեցի, երբ եկեղեցու պաշտօնական մարմինը՝ ի դէմս իր հոգևորականութեան, ի դէմս իր սրբազնագործ պաշտօնեաների՝ ներկայ է և ժամասացութիւն կամ արարողութիւն է կատարում, կամ բեմբասացութիւն է անում և կամ նուիրապետական կեանքին ու կազմին վերաբերեալ խնդիրների մասին հաւաքումներ, խորհրդակցութիւններ է կազմում իր հովուութեանը յանձնվածների, իր դաւանութեանը պատկանողների հետ։

Ահա այդ պայմաններում՝ եկեղեցին իր հոգևոր, իր իսկական դրութեան մէջ է։

Մնում է որոշել այն հարցը, թէ մեր եկեղեցի անունը կրող շէնքը կարող է եկեղեցի համարվել առանց ներքին, հիմնական, էական կենդանի եկեղեցու, որ է հոգևորականութիւնը՝ միացած իր դաւանակիցների հետ, կամ իրաւ կը սրբազործվի արդեօք, երբ այն եկեղեցի լինելու պայմանի մէջ չէ, այլ փոխվում է մի պարզ ժողովատեղիի, մի այնպիսի ժողովարանի, ուր պաշտօնապէս չէ մասնակցում հոգևորականութիւնը, ուր չէ կատարվելու արարողութիւն, ծէս, աղօթք։

Քանի որ եկեղեցականը փիլոնը վրան, շուրջառը ձգած, խաչը, Մաշտոցը, մոմը ձեռքին՝ չէ կարող լինել մասնաւոր գործի, չի մասնակցի այլ և այլ ընկերութիւնների, չի գնայ հիւր և այլն, այսպէս և եկեղեցին իր մէջ կատարվող բոլոր կրօնական արարողութիւնների ժամերին պիտի լինի ու հայ աղօթքի տուն։

Ամենապահպանողական հոգևորականին թէ հայ քրիստոնէին յայտնի է, որ մենք քրիստոնեաներս Ս. Գրքի մէջ համարված և անուանված ենք «կենդանի տաճար». հետևապէս իմ համեմատութիւնը եկեղեցականի և եկեղեցու հետ ընաւ օտարոտի չը պիտի երևայ։

Անտարակոյս այս պարագաներն աչքի առաջ ունենալով է, որ մեր թիւրքահայ ազգային ժողովը իր նախագահ պատրիարքով ձայների մեծամասնութեամբ վճռել է, որ, այո, մեր եկեղեցին իբրև չէնք կարող է ծառայել նաև իբրև ժողովարան նոյնիսկ քաղաքական կուսակցութիւնների. պատկանած անձերի հաւաքումների համար, որոշ պայմաններով։

Այս վճիռը անագին իրարանցումն է առաջ բերել մեր կեանքի մէջ, մտքերի փոխանակութիւնների առարկայ է դարձել մեր մամուլի մէջ։

Յարուցված խնդրի առիթով Վեհափառ Մատթէոս Բ. Կաթողիկոսը կոնդակ է հրատարակել, որ տպված էր «Մշակի» № 81-ի մէջ։

Երբ թիւրքահայ ամբողջ եկեղեցու—ժողովրդի էն պաշտօնական ներկայացուցչական պատկառելի ու հեղինակաւոր մարմինը, որ ասվում է Ազգային Երեսփոխանական Ժողով, ձայների բազմութեամբ վճիռ է կայացրել դրական իմաստով, այդ իրողութիւնը մեզ ասում է, որ եկեղեցին չէ նսեմանում պարզ ժողովատեղի դառնալով իր պարապ ժամանակներում, իր պաշտօնական կարիքներին, պիտոյքներին չը ծառայելու դէպքերում և իր հոգևոր ներկայացուցիչների ոչ զեկավարելու, ոչ նախագահելու և ոչ իբրև հոգևորական մասնակցելու պայմաններում։

Վեհափառ Հայրապետի կոնդակը յարուցված խնդրի նկատմամբ հաստատում է որ՝ «ի բացառիկ հանգամանս... ընդ ազդեցութեամբ բուռն զգացմանց և անսահման ոգևորութեան ժողովրդոց գումարեցան յեկեղեցիս» նոյն իսկ միտինգներ։

Բայց մթթէ բացառիկ հանգամանքներն այսօր վերացել են, կամ մթթէ արդիս և «բուռն զգացմանց և ոգևորութեան» ազդեցութիւնը չէ ներգործում։ Քանի որ մեծ հաւաքումների յարմար շէնքեր կեանքը դեռ ևս չէ կառուցել, քանի որ «բուռն զգացումները և ոգևորութիւնները» դեռ ևս կան, պարզ է որ հանգամանքները մնում են նոյն «բացառիկը»։

Անշուշտ բացառիկ է լինում հանգամանքը, երբ գաղթական հոսանքների առաջ եկեղեցու՝ իբրև մեծ շէնքի՝ դռները բացվում են և եկեղեցին շաբաթներով ընակարանների է վերածվում։

Անշուշտ բացառիկ է լինում հանգամանքը, երբ Էջմիածնի մայր տաճարում ժամերով տևող դռնփակ համագումարի միջոցին, ներսը ծխելու... յայտարարութիւններ են տրվում։

Վեհափառ Հայրապետի կոնդակը շեշտում է և այն թէ՝ «Գիտեն ամենապատուութիւն ձեր և պատուարժան անդամք կրօնական և քաղաքական ժողովոց եթէ ս. եկեղեցին հայոց չի ասպարեզ եւ բեմ քաղաքական եւ կուսակցական բանախօսութեանց»։

Անշուշտ հայոց եկեղեցին պէտք է իր խաղաղ հեռու պահի կուսակցական դիտումներով տարվելուց և հայոց եկեղեցին միշտ էլ իրան հեռու է պահել։ Հայոց եկեղեցին երբէք իր ժամասացութիւնների, իր պաշտօնական հաւաքումների ժամանակ իր բեմը չէ դարձրել և չի դարձնի քաղաքական ճառախօսութիւնների վայր։ Եւ այժմ էլ հայոց եկեղեցին չէ, այլ եկեղեցու ժիայն շէնքի մէջ է, որ դուրսեցիները ժողովներ են առնում։ Նրանց ժողովների, խօսածների, քարոզների համար հայոց եկեղեցին պատասխանատու և հաշուետու լինել չէ կարող։